ԷՋՄԻԱԾԻՆ

ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Հունվարի 2-ին, կիրակի.—Նոր տարվա առթիվ Մայր տաճարում առաջին ս. պատարագն է մատուցում տ. Նշան քհն. Բեյլերյանը:

Հավարտ ս. պատարագի քարոզում է Մայր տաճարի լուսարարապետ տ. Հայկազուն արքեպ. Աբրահամյանը՝ «Դու, Տէր, զայս ամս եւ ի լրումն հասցուցեր» բնաբանով, խորհրդածություններ է կատարում Նոր տարվա առթիվ, և սրտագին բարեմաղթություններով շնորհավորում է Հայոց Հայրապետի, հայ ժողովրդի և միաբանության Ամանորը:

Հավարտ ս. պատարագի, Վեհափառ Հայրապետի հանդիսադրությամբ, կատարվում է հայրապետական մաղթանք:

Ս. պատարագը և եկեղեցական այլ արարողությունները կատարում են հոգևոր ճեմարանի սաները՝ բարեշնորհ Արարատ սրկ. Գալստյանի ղեկավարությամբ:

Հունվարի 9-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում տ. Հակոբ քհն. Հակոբյանը:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

* * *

Հունվարի 13-ին, հինգշաբթի.—Տօն անուանակոչութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի.

Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում տ. Նշան քհն. Բեյլերյանը: Ս. պատարագի երգեցողությունը կատարում է հոգևոր ճեմարանի ուսանողությունը:

Հավարտ ս. պատարագի ս. Գայանեի վանքում, տ. Հայկազուն արքեպիսկոպոսի գերեզմանի վրա, կատարվում է հոգեհանգիստ:

* * *

Հունվարի 15-ին, շաբաթ.—Տօն ծննդեան սրբոյն Յովհաննու Կարապետին.

Այսօր Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում տ. Հովհաննես քհն. Մարուքյանը:

* * *

Հունվարի 16-ին, կիրակի.—Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում տ. Գևորգ վրդ. Սերայդարյանը և քարոզում Հովհաննես Մկրտչի կյանքի և գործունեության մասին:

Հավարտ ս. պատարագի հոգեհանգստյան պաշտոն է կատարվում Նուպար Կյուլպենկյանի հիշատակին՝ Վեհափառ Հայրապետի նախագահությամբ:

*
* *

Հունվարի 17-ին, երկուշաբթի.—Այսօր հոգևոր ճեմարանում սկսվում են կիսամյա քննությունները, որոնք շարունակվում են մինչև հունվարի 26-ը:

*
* *

Հունվարի 17-ին, երկուշաբթի.—Այսօր, հին տոմարով ս. Ծննդյան տոների առիթով եկեղեցական տոնակատարություններին մասնակցելու համար, Ռոստով է մեկնում տ. Գևորգ վրդ. Սերայդարյանը, Թբիլիսի՝ Ժիրայր և Կտրիճ սարկավագները, Կիրովաբադ՝ տ. Նշան քհն. Բեյլերյանը և Եղիշե սրկ. Բաղրամյանը, Արմավիր՝ Ճավարշ սարկավագը:

*
* *

Հունվարի 23-ին, կիրակի.—Բարեկենդան Առաջաւորաց պահոց.

Այսօր Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում տ. Հակոբ քհն. Հակոբյանը:

*
* *

Հունվարի 25-ին, երեքշաբթի.—Այսօր Վենետիկի Մխիթարյան վանքի միաբան հայր Եփրեմ վրդ. Տեր-Ղազարյանը ուխտավորաբար ժամանում է ս. Էջմիածին:

Մայր տաճարում իր ուխտն ու աղոթքը կատարելուց հետո հայր Եփրեմը ներկայանում է Վեհափառ Հայրապետին՝ Նրա օրհնությունը ստանալու:

Հայր Եփրեմ վրդ. Տեր-Ղազարյանը, Վեհափառ Հայրապետի կարգադրությամբ, հոգևոր ճեմարանում կդասավանդի որոշ առարկաներ:

*
* *

Հունվարի 29-ին, շաբաթ.—Այսօր ուխտավորաբար Մայր Աթոռ ս. Էջմիածին է ժամանում Դամասկոսի հայոց առաջնորդ տ. Կորյուն ծ. վրդ. Մանվելյանը:

Մայր տաճարում իր ուխտն ու աղոթքը կատարելուց հետո տ. Կորյուն ծ. վարդապետը ներկայանում է Վեհափառ Հայրապետին՝ Նրա օրհնությունը ստանալու:

Նույն օրը Մայր Աթոռ է վերադառնում տ. Աղան վրդ. Բալիոզլյանը, որը 15 օր առաջ մեկնել էր Երուսաղեմ, ս. Ծննդյան տոների առիթով:

*
* *

Հունվարի 30-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում տ. Նշան քհն. Բեյլերյանը, իսկ քարոզում է տ. Կորյուն ծ. վրդ. Մանվելյանը՝ «Էջ Միածինն ի Հօրէ և լոյս փառաց ընդ նմա» բնաբանով: